ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆԻ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ՝ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏ

ԺԲ.00.03 – Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРДАНЯН АРТУР АРМЕНОВИЧ

СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ КООПЕРАТИВ КАК СУБЬЕКТ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКИХ ОТНОШЕНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право (гражданское, коммерческое, международное частное, семейное, трудовое, социальное обеспечение)

Ереван-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Դավիթի Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արմեն Մերուժանի Հայկյանց
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Արսեն Աշոտի Թավադյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի դեկտեմբերի 24-ին՝ ժամը 14^{30}-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ԲՈԿ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2021թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Տ. Հ. Սուջյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор Ваграм Давидович Аветисян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Армен Меружанович Айкянц
кандидат юридических наук, доцент Арсен Ашотович Тавадян

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита состоится 24-ого декабря 2021 г. в 14^{30} часов на заседании специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 11-ого ноября 2021 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук, доцент Т. О. Суджян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Համաշխարհային տնտեսության վրա ավելի ու ավելի ազդող գլոբալացումը հարկադրում են նորովի գնահատել տնտեսական կյանքի ավանդական թվացող գործընթացները, փորձել կանխատեսել դրանց դերն ու նշանակությունը արագ փոփոխվող աշխարհում: Այդպիսի երևույթներից մեկն էլ կարելի է համարել կոոպերատիվ շարժումը, որն արդեն թևակոխել է իր գոյության երեքհարյուրամյակը և որպես տնտեսավարման համակարգ ոչ միայն հաստատում է իր ավանդական առավելությունները, այլև դրսևորում է նոր որակներ, որոնք աշխատանքային և սոցիալական հարաբերությունների այդ ձևը դարձնում են առավել հումանիստական և հասարակության կողմից պահանջարկ վայելող:

Զարգացած երկրների տնտեսությունները համարվում են խառը տիպի տնտեսություններ, ինչն էլ ենթադրում է լայն համագործակցություն պետության և մասնավոր տնտեսվարողների միջև: Կոոպերատիվները կազմում են այդ համակարգի կարևորագույն տարրը, ինչը երևում է տնտեսության տարբեր ճյուղերում նրանց գրանցած ցուցանիշներից: Չնայած իրենց երկարամյա գոյությանը և գրանցած հաջողություններին՝ կոոպերատիվները Հայաստանում գտնվում են զարգացման ցածր մակարդակի վրա, ինչը պայմանավորված է օրենսդրության անկատարությամբ, համափարփակ գիտական ուսումնասիրությունների բացակայությամբ, կոոպերատիվներին վերաբերյալ առկա հին և կարծրացած պատկերացումներով:

Հայաստանի Հանրապետությունում առկա ցածր կենսամակարդակը, կոոպերատիվների գործունեության և զարգացման համար թերի իրավական կարգավորվածությունը, պետության աջակցության ոչ բավարար մակարդակը անհրաժեշտություն են առաջացրել անդրադառնալ այս հարցի առվել համապարփակ ուսումնասիրությանը, առկա տեսական և գործնական խնդիրների վերհանմանը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական բարեփոխումների առաջին տարիներին, որոնք ուղեկցվում էին գների ազատականացմամբ և պետական սեփականության մասնավորեցմամբ, կոոպերատիվները դուրս մնացին պետության

ուշադրությունից և գրեթե վերացան: Միայն 1998թ. ընդունված Քաղաքացիական օրենսգիրքը սահմանեց կոոպերատիվների իրավական կարգավիճակը, այն էլ բազում թերացումներով և ընդհանրական մակարդակով: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հետազոտության նպատակն ենք դարձրել ուսումնասիրել և համակարգային վերլուծության ենթարկել գյուղատնտեսական կոոպերատիվների ինստիտուտը, մշակել Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Քաղ. օր.), «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք), ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերատիվներին վերաբերող այլ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն ուղղված առաջարկներ:

Վերը նշված նպատակին հասնելու համար խնդիր է դրվել՝

1. համեմատական վերլուծության ենթարկել ավանդական կոոպերատիվները և «նոր սերնդի» կոոպերատիվները՝ ուսումնասիրելով ԵՄ երկրների, ԱՄՆ-ի, Ճապոնիայի և այլ զարգացած երկրների փորձը, անդրադարդառնալ ԱՊՀ անդամ-պետություններում առկա վիճակին,

2. ուսումնասիրելով գյուղատնտեսական կոոպերատիվների հատկանիշները՝ կատարել դրանց դասակարգումը, վերլուծել կոոպերատիվի նշանակությունը և իրավական բնույթը՝ որպես իրավաբանական անձ,

3. վեր հանել գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրները և - հիմնավորել ՀՀ-ում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման անհրաժեշտությունը,

4. կատարել կոոպերատիվներին վերաբերող ՀՀ իրավական դաշտի վերլուծություն, առաջարկներ ներկայացրել դրա կատարելագործման վերաբերյալ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Աշխատանքի ուսումնասիրության առարկան են կազմում կոոպերատիվների ստեղծման և նրանց գործունեության հետ կապված հասարակական հարաբերությունները: Ուսումնասիրության օբյեկտն են՝ կոոպերատիվները՝ որպես իրավաբանական անձանց տեսակ, գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները, գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները և մի շարք այլ հարցեր: Համեմատական ու-

սումնասիրության են ենթարկվել նաև կոոպերատիվներին վերաբերող օտարերկրյա իրավակարգավորումները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ աշխատանքում կիրառվել են ընդհանուր գիտական մեթոդներ, մասնավորապես, ճանաչողության դիալեկտիկական մեթոդը, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, համեմատության և անալոգիայի մեթոդները: Ատենախոսական հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար կիրառվել են նաև իրավագիտության ոլորտի մասնավոր գիտական մեթոդներ, մասնավորապես՝ նորմատիվ-տրամաբանական, համեմատաիրավական, պատմաիրավական և այլն: Սույն աշխատանքի պատրաստման ընթացքում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել պատմաիրավական և համեմատաիրավական մեթոդներին:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմքն են Տ.Կ. Բարսեղյանի, Վ.Դ. Ավետիսյանի, ռուս գիտնականներ Գ.Վ. Գուտմանի, Ա.Վ. Չայանովի, Ա.Պ. Մակարենկոյի, Կ.Ի. Վախիտովի, եվրոպացի և ամերիկացի հեղինակներ Ջ. Լեռմանի, Ա. Ֆիցցիի, Ջ. Սթյուարտի և այլոց աշխատությունները:

Հետազոտության տեսական հիմքն են հանդիսացել նաև Ռ. Ցիմերմանի, Ի. Դ. Զայցևի, Հ. Գ. Գադամերի, Ժ. Բենտամի, Ֆ. Կեսլերի և այլոց փիլիսոփայական, հոգեբանական, պատմական, լեզվաբանական աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ-իրավական հիմքը: Ուսումնասիրության գործնական հիմքն են կազմում ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը, «Սպառողական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը, մի շարք ներպետական իրավական ակտեր, ինչպես նաև ԱՊՀ անդամ-երկրների կոոպերատիվ օրենսդրությունը, այդ թվում՝ ԱՊՀ՝ կոոպերատիվներին վերաբերող մոդելային օրենքը, ԵՄ և ԱՄՆ՝ կոոպերատիվներին վերաբերող իրավական ակտերը: Ուսումնասիրվել են նաև Միավորված ազգերի կազմակերպության, Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ կոոպերատիվներին վերաբերող իրավական կարգավորումները:

Հետազոտության փորձառական հիմքը: Հետազոտության փորձառական հիմքն են ՀՀ Վճռաբեկ դատարանի դատական ակտերը, օտա-

րերկրյա դատարանների, առավելապես՝ ՌԴ և ԱՄՆ դատարանների կողմից կայացված որոշումները: Ուսումնասիրվել են նաև արդեն իսկ գրանցված կոոպերատիվների հիմնադիր փաստաթղթեր և վիճակագրական տվյալներ:

Ատենախոսության գիտական նորույթը: ՀՀ անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում կոոպերատիվների գործունեությունը կարգավորող օրենսդրությունը չի ենթարկվել համապարփակ ուսումնասիրության, ինչպես նաև բացակայում են կոոպերատիվներին վերաբերող համալիր գիտական հետազոտությունները: Տեսության մեջ արտահայտված կարծիքների, ՀՀ և օտարերկրյա օրենսդրության, միջազգային իրավական կարգավորումների հիման վրա բացահայտվել է կոոպերատիվների էությունը, ժամանակակից հասկացություններին և մոդելներին համահունչ՝ առաջարկներ են կատարվել օրենսդրական փոփոխությունների ուղղությամբ: Հետազոտության շրջանակներում բազմակողմանի և համապարփակ ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ՝ կոոպերատիվներին վերաբերող իրավական դաշտը, կատարվել է միջազգային փորձի ուսումնասիրություն՝ հիմք ունենալով միջազգային լավագույն փորձը, կատարվել են իրավական բարեփոխումների մի շարք առաջարկներ:

Հետազոտության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում, իր արտացոլումն է գտել նաև աշխատանքի շրջանակներում կատարված առաջարկներում, որոնք ամփոփվել են եզրակացությամբ:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Միջազգային փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ կոոպերատիվները դասակարգվում են երկու առաջնային և մեծ խմբերի՝ առևտրային և սպառողական կոոպերատիվների: Առևտրային կոոպերատիվները հետապնդում են շահույթ ստանալու նպատակ, իսկ սպառողական կոոպերատիվների գործունեության հիմնական նպատակը անդամների պահանջմունքների բավարարումն է: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է *կոոպերատիվի* հասկացությունը, այնուամենայնիվ ներպետական օրենսդրությամբ բացակայում է առևտրային և սպառողական կոոպերատիվների իրավական բնորոշումը, ինչը պատճառ է դառնում բազում տարընթերցումների՝ իր հետ առաջ բերե-

լով նաև գործնական խնդիրներ, ինչպիսին է օրինակ շահույթի բաշխմանը վերաբերող խնդիրը: Պետք է նկատել նաև, որ 117-րդ հոդվածում ամրագրված *կոոպերատիվի* հասկացությունը թերի է, չի արտահայտում նաև կոոպերատիվների հիմնական, տիպային հատկանիշը, որը բնորոշ է բոլոր տեսակի կոոպերատիվներին, այն է՝ կոոպերատիվների դեմոկրատական կառավարումը, միաժամանակ չի համապատասխանում Կոոպերատիվների միջազգային դաշինքի կողմից նախատեսված և բոլոր զարգացած երկրների կողմից իմպլեմենտացված բնորոշմանը:

Խնդիրը կարգավորելու նպատակով առաջարկել ենք Քաղաքացիական օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել՝ սահմանելով կոոպերատիվների նոր բնորոշում, միաժամանակ առաջարկվել է հոդվածը լրացնել նոր՝ 4.1 և 4.2 մասերով, որոնք կսահմանեն առևտրային և սպառողական կոոպերատիվների հասկացությունները:

2. Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ կոոպերատիվների գործունեությունը հիմնվում է մի շարք սկզբունքների վրա, որոնց արդյունքում էլ կոոպերատիվները ձեռք են բերել և ձեռք են բերում իրենց բնորոշ առանձնահատկությունները, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն կոոպերատիվ սկզբունքները, այնինչ դրանց ամրագրումն ունի նաև կարևոր գործնական նշանակություն, այդ թվում՝ իրավաստեղծ գործունեության ընթացքում: Նշվածը հաշվի առնելով, կարծում ենք, անհրաժեշտ է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1 հոդվածով, որը կսահմանի կոոպերատիվ սկզբունքները:

3. Ներդրումային միջավայրի գրավչությունը մեծապես պայմանավորված է իրավական հասկացությունների հստակությամբ, ինչպես նաև ներդրողի իրավական կարգավիճակը, ներդրվող գույքի իրավական կարգավիճակը սահմանող նորմերի հստակությամբ և համապարփակությամբ: Նշվածը հաշվի առնելով՝ մեր կողմից մի շարք առաջարկներ են կատարվել ներդրող անդամի իրավական կարգավիճակը հստակեցնելու, շահույթի և վնասների բաշխման կարգը սահմանելու ուղղությամբ: Նպատակ ունենալով բարելավել ներդրումային միջավայրը գյուղատնտեսության ոլորտում և - հատկապես կոոպերատիվ մոդելում՝ առաջարկում ենք «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրաց-

նել 16.1 կետով, որը կսահմանի *ներդրող անդամի* հասկացությունը: Անհրաժեշտ է Օրենքը լրացնել ներդրող անդամի իրավական կարգավիճակը սահմանող 12.1 հոդվածով: Հաշվի առնելով գործող օրենսդրությամբ շահույթի և վնասների բաշխման կարգավորումներին վերաբերող խառնաշփոթը, միաժամանակ նկատի ունենալով ներդրումային միջավայրի բարելավման հրամայականը և այդ ուղղությամբ արված առաջարկները, կարծում ենք, անհրաժեշտ է հստակեցնել նաև կոոպերատիվի եկամուտների և վնասի բաշխման կարգը, ուստի առաջարկում ենք խմբագրել Օրենքի 23-րդ հոդվածը (առավել մարմասն՝ 2-րդ գլխի 2-րդ պարագրաֆում):

3. Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի չի նախատեսել իրավական կարգավորումներ, այն դեպքերի համար, երբ կառավարման մարմնի գործունեության արդյունքում վնաս է պատճառվում կոոպերատիվին: Այնինչ կառավարման մարմինների գործունեության հետևանքով պատճառված վնասի և դրա հատուցման կարգի վերաբերյալ կարգավորումներ նախատեսված են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (հոդված 46), «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (հոդված 90): Նման կարգավորումներ նախատեսված են նաև գյուղատնտեսական կոոպերատիվներին վերաբերող օտարերկրյա իրավական ակտերով: Վերոգրյալը հաշվի առնելով՝ առաջարկել ենք «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը լրացնել 20.1 հոդվածով, որը կնախատեսի կոոպերատիվի կառավարման մարմինների պատասխանատվության դրույթներ, երբ վերջիններիս գործողությունների արդյունքում վնաս կհացվի կոոպերատիվներին:

4. Ինչպես ցույց է տալիս միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրությունը առևտրային կոոպերատիվի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առևտրային կոոպերատիվներում պարտադիր է անդամների աշխատանքային մասնակցությունը, ինչը կարևոր ցուցիչ է նաև շահույթի բաշխման հարցերում: Քանի որ անդամի աշխատանքային մասնակցությունը պարտադիր է, հետևաբար կոոպերատիվին անդամակցելու ուժով անդամի և կոոպերատիվի միջև առաջանում են աշխատանքային հարաբերություններ, որոնք իրավական կարգավորման անհրաժեշտություն ունեն:

ՀՀ՝ կոոպերատիվներին վերաբերող օրենսդրությունը չի կարգավորում կոոպերատիվի և անդամի միջև առաջացող աշխատանքային հարաբերությունները, ինչը կարող է առաջ բերել մի շարք խնդիրներ, ինչպիսիք են աշխատավարձ ստանալու իրավունքի խախտումը, առևտրային կոոպերատիվին անդամակցության տարիները՝ աշխատանքային ստաժում հաշվարկելու իրավունքի խախտումը և այլն: Վերը նշվածը հաշվի առնելով գտնում ենք, որ անհրաժեշտ է, որ Աշխատանքային օրենսգրքում որպես աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք նախատեսել՝ անդամակցությունը կոոպերատիվին: Միաժամանակ կարծում ենք՝ անհրաժեշտ է «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը լրացնել հետևյալ նոր՝ 12.1 հոդվածով, որը կկարգավորի անդամի և կոոպերատիվի միջև առաջացող աշխատանքային հարաբերությունները:

5. Գյուղատնտեսության պոտենցիալը ճիշտ օգտագործելու ճանապարհին պետության կողմից առաջնային է հողային բարեփոխումների քաղաքականության հրատապ և հետևողական իրագործումը: Հողային բարեփոխումը գյուղատնտեսության ոլորտի զարգացման հենասյուներից մեկն է, առաջնային և հիմնարար խթանը գյուղատնտեսության զարգացման ճանապարհին: Հողային բարեփոխումների համակարգում իր ուրույն դերն ունի հողային ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործումը, իսկ ոլորտի իրավական բարեփոխումները կյանքի կոչելիս կարծում ենք որպես ելակետ պետք է ընդունել գյուղական համայնքներում կոոպերատիվ մոդելի առևտրային կազմակերպությունների հիմնման և զարգացման անհրաժեշտությունը: Վերոգրյալը հաշվի առնելով՝ մեր կողմից կատարվել են Հողային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մի շարք առաջարկներ, որոնք թույլ կտան ներդրումային ծրագիր իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին ի սեփականություն և անհատույց տրամադրել գյուղատնտեսական նշանակության հողեր, ինչը լրացուցիչ խթան կհանդիսանա գյուղատնտեսության բնագավառում ձեռնարկատիրական գործունեության զարգացման համար:

Հետազոտության տեսական և գիտագործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կոոպերատիվների՝ որպես իրավաբանական անձի ինքնուրույն տեսակի համալիր և խորը վերլուծությունն է, ինստիտուտի զարգացման հիմնական միտումները վեր հանելն ու

այնպիսի մեկնաբանություններ ու կարգավորումներ առաջարկելը, որոնք թույլ կտան կիրառել կոոպերատիվը ժամանակակից միտումներին և հասկացություններին համահունչ:

Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունները, մեկնաբանությունները, եզրահանգումները և դրանց հիման վրա ներկայացված առաջարկները կարող են կարևոր նշանակություն ունենալ քաղաքացիական իրավունքի գիտության, կոոպերատիվ օրենսդրության զարգացման համար: Ատենախոսությունում արված վերլուծությունները լրացնում են կոոպերացիային վերաբերող տեսական գրականությունը, իսկ հետազոտության արդյունքում արված եզրահանգումները կարող են օգտագործվել հարցին նվիրված հետագա ուսումնասիրություններում, քննարկումներում, ուսումնական գործընթացում, իրավաստեղծ գործունեության ոլորտում, օրենսդրության կատարելագործման, դրանում առկա բացերը, թերություններն ու հակասությունները վերացնելու համար, ինչպես նաև իրավակիրառ գործունեության մեջ միասնական, հակասություններից զերծ պրակտիկա ձևավորելու համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հեղինակը մասնակցել է ոլորտի առնչությամբ գիտաժողովների: Թեմայի առնչությամբ հեղինակը ներկայացրել է մի շարք գիտական հոդվածներ:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված տասնմեկ պարագրաֆներից և երկու ենթապարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկ նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող

հիմնական դրույթները, ներկայացվում են հետազոտության տեսական և - գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը ունի «Գյուղատնտեսական կոոպերատիվի հասկացությունը և տեսակները» վերտառությունը և բաղկացած է 4 պարագրաֆներից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ «Գյուղատնտեասական կոոպերատիվի հասկացությունը և առանձնահատկությունները» վերտառությամբ, քննարկվել է գյուղատնտեսական կոոպերատիվների հասկացությունը և դերը՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների ինքնուրույն սուբյեկտ: Ընդգծվել են կոոպերատիվի առանձնահատկությունները իրավաբանական անձանց մյուս տեսակների նկատմամբ: Սույն պարագրաֆի շրջանակներում մեր կողմից առաջարկներ են արվել քաղաքացիական օրենսգրքում ամրագրել առևտրային և սպառողական կոոպերատիվների հասկացությունները:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները» վերտառությամբ, ներկայացված են գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները, ներկայացված են նրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների սկզբունքները» վերտառությամբ, ներկայացված են Կոոպերատիվների միջազգային դաշինքի կողմից ընդունված, և ամբողջ աշխարհում տարածում գտած կոոպերատիվ սկզբունքները՝ ընդգծելով դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները: Վերլուծության արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել կոոպերատիվ սկզբունքները:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆն ունի «Գյուղատնտեսական կոոպերատիվի գույքը և դրա ձևավորման միջոցները» վերտառությունը: Պարագրաֆի շրջանակում ներկայացված են կոոպերատիվի գույքի ձևավորման աղբյուրները՝ մատնանշելով կամավոր, պարտադիր և լրացուցիչ փայավճարների հասասկացությունները:

Երկրորդ գլուխը՝ «Մասնակցությունը կոոպերատիվի գործունեությանը և կառավարման մարմինները» վերտառությամբ, բաղկացած է երեք պարագրաֆներից և երկու ենթապարագրաֆներից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվի անդամի իրավական կարգավիճակը» վերտառությամբ, նկարագրվել է կոոպերատիվի անդամի իրավական կարգավիճակը, ներկայացվել է իրավունքների և պարտականությունների շրջանակը: Կատարվել են առաջարկներ, որոնք ուղղված են անդամի աշխատանքային իրավունքները և պարտականությունները հստակեցնելուն, ինչպես նաև կոոպերատիվին անդամակցելը առավել գրավիչ դարձնելուն:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆը վերնագրված է «Մասնակցությունը գյուղատնտեսական կոոպերատիվին՝ որպես գործարարական գործունեությամբ զբաղվելու արդյունավետ միջոց»: Պարագրաֆում նկարագրված են կոոպերատիվի անդամի և մասնակցի իրավական կարգավիճակի տարբերությունները: Ներկայացվել է նաև «ներդրող անդամի» իրավական կարգավիճակը, կատարվել են մի խումբ առաջարկներ կոոպերատիվները ներդրողների համար առավել գրավիչ դարձնելու նպատակով, մասնավորապես՝ առաջարկ է արվել սահմանել ներդրող անդամի հասկացությունը, վերջինիս իրավունքների և պարտականությունների շրջանակը, ներդրող անդամի մասնակցության կարգը կոոպերատիվին: Առաջարկվել է հստակեցնել նաև շահույթների և վնասների բաշխման կարգը:

Երկրորդ գլխի երրորդ պարագրաֆը՝ «Կոոպերատիվի կառավարման մարմինները և դրանց առանձնահատկությունները» վերտառությամբ բաղկացած է երկու ենթապարագրաֆներից, որոնք ունեն հետևյալ վերտառությունը՝ «Կոոպերատիվի՝ կամքը ձևավորող մարմինները», «Կոոպերատիվի՝ կամքը արտահայտող մարմինները»: Պարագրաֆի շրջանակներում ներկայացված է կոոպերատիվի կառավարման մարմինների ընդհանուր բնութագիրը: Հաշվի առնելով տեսական գրականության մեջ ընդունված տարանջատումը՝ պարագրաֆը տրոհվել է 2 ենթապարագրաֆների, որոնցից առաջինում ներկայացված է ընդհանուր ժողովի հասկացությունը, դերը և գործառույթները՝ որպես կամքը ձևավորող մարմին, իսկ երկրորդում՝ գործադիր մարմինների դերը և նշանակությունը: Կատարվել են մի խումբ

առաջարկներ կառավարման մարմինների գործունեությունը առավել արդյունավետ և հաշվետու դարձնելու նպատակով:

Երրորդ գլուխը, որն ունի «Կոոպերացիայի զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությունը, բաղկացած է չորս պարագրաֆներից:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ «Կոոպերացիայի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ, ներկայացված են ՀՀ գյուղատնտեսության ոլորտի խնդիրները և կոոպերացիայի ներկա վիճակը, զարգացմանը խոչընդոտող խնդիրները: Կատարվել են առաջարկներ առկա խնդիրների լուծման ուղղությամբ:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ «Կոնտրակտացման պայմանագիրը՝ որպես կոոպերացիայի աջակցության գործիք» վերտառությամբ, ներկայացված է կոնտրակտացման պայմանագրի բնույթը: Հաշվի առնելով, որ 1998թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բացակայում են կոնտրակտացման պայմանագրին վերաբերող դրույթները՝ մեր կողմից կատարվել են առաջարկներ Քաղաքացիական օրենսգրքում կոնտրակտացման պայմանագրին վերաբերող դրույթներ ներառելու ուղղությամբ:

Երրորդ գլխի երրորդ պարագրաֆն ունի «Պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը՝ որպես գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության միջոց» վերտառությունը: Պարագրաֆի շրջանակներում ներկայացվել են կոոպերացիայի զարգացման առջև ծառացած ֆինանսական խնդիրները, ներկայացվել են այն հնարավոր միջոցները, որոնցով կարելի է արդյունավետ ֆինանսական աջակցություն ցուցաբերել կոոպերատիվներին: Կատարվել են նաև առաջարկներ, որոնք հնարավորություն կտան վերահսկել հատկացված ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումը:

Երրորդ գլխի չորրորդ պարագրաֆում՝ «Հողային բարեփոխումների անհարժեշտությունը կոոպերացիայի աջակցության գործում» վերտառությամբ, ներկայացված են հողային ոլորտի խնդիրները, որոնք առավելագույնս խոչընդոտում են կոոպերացիայի զարգացմանը և գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը: Պարագրաֆի շրջանակում մեր կողմից կատարվել են մի քանի առաջարկներ, ինչպես իրավական ակտերում փո-

փոխություն կատարելու նպատակով, այնպես էլ խնդիրների գործնական լուծման նպատակով:

Ատենախոսության եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթներ, կատարվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկները.

1. Օրենսդրության մեջ սպառողական և առևտրային կոոպերատիվների տարանջատման բացակայությունը իր հետ առաջ է բերում տեսական և գործնական մի շարք խնդիրներ, որոնց թվին կարելի է դասել այն փաստը, որ Քաղաքացիական օրենսգրքով ամրագրված կոոպերատիվների հասկացությունից բխում է, որ կոոպերատիվի անդամ կարող են լինել և՛ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձինք՝ անկախ կոոպերատիվի տեսակից: Այնինչ, ինչպես ցույց է տալիս օտարերկրյա իրավական ակտերի և իրավաբանական գրականության ուսումնասիրությունը, առևտրային կոոպերատիվի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք. իրավաբանական անձինք կարող են անդամակցել բացառապես սպառողական կոոպերատիվներին, իսկ առևտրային կոոպերատիվներում իրավաբանական անձինք կարող են ունենալ ներդրող անդամի կարգավիճակը:

2. Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրներից են հողային ոլորտի խնդիրները: Հողային ոլորտի խնդիրներից է հողային կադաստրի թերի զարգացվածությունը և անկատար վիճակը, մասնավորապես այն, որ բազում գյուղատնտեսական նշանակության հողեր դուրս են մնացել հաշվառումից: Նշված խնդիրները լուծելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել գյուղատնտեսական հողերի հաշվառում, ստեղծել նոր հողային կադաստր, միաժամանակ ստեղծել գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի էլեկտրոնային հարթակ, որը թույլ կտա ներդրողներին տեսնելու վաճառվող գյուղատնտեսական նշանակության հողերը՝ ըստ գոտիավորման, բերրիության, հասանելի ենթակառուցվածքների և այլն:

3. Գյուղատնտեսության զարգացմանը նպաստելու և կոոպերատիվ շարժմանը զարկ տալու նպատակով, բացի հողային ռեսուրսների արդյունավետ կառավարումից, անհրաժեշտ է նաև ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարան համար անհրաշետ է ջրօգտագործողների ընկերությունների և կոոպերատիվների միջև ակտիվ համագործակցությունը, ինչպես նաև ջրօգտագոր-

ծողների ընկերությունների գործունեության նկատմամբ հսկողական կառուցակարգերի ներդրումը:

4. Գյուղատնտեսության ոլորտը տնտեսության ամենառիսկային ճյուղերից է, որը պայմանավորված է մարդու կամքից անկախ գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են երաշտը, ցրտահարությունը և այլն: Նման ռիսկերի ազդեցությունը մեղմելու, առանց այդ էլ սահմանափակ ռեսուրսներ ունեցող գյուղացիական տնտեսությունները պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է արդյունավետ ապահովագրական համակարգի ներդրումը գյուղատնտեսության ոլորտում, այդ թվում՝ ապահովագրական կոոպերատիվների ստեղծման համար անհրաժեշտ իրավական բազա ստեղծելու միջոցով:

5. Գյուղատնտեսության առջև ծառացած խնդիրները մեծապես պայմանավորված են նաև ֆինանսական ռեսուրսների սակավությամբ: Գյուղացիական տնտեսություններին հատկացվող դրամական միջոցները հաճախ օգտագործվում են ոչ նպատակային կամ անարդյունավետ, ինչի հետևանքով առկա խնդիրները շարունակում են մնալ չլուծված: Նշված խնդիրները լուծելու, ինչպես նաև հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով կարծում ենք օրենսդրորեն անհրաժեշտ է հստակ սահմանել այն չափանիշները, որոնց առկայության պայմաններում պետք է կոոպերատիվներին տրամադրվի պետական աջակցություն՝ հատկացումների նպատակային օգտագործման համար սահմանելով հստակ հսկողական մեխանիզմներ, միաժամանակ չխոչընդոտելով կոոպերատիվների գործունեության ինքնուրույնությանը:

6. Կոոպերատիվներին անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներով ապահովելու համար անհրաժեշտ է նաև իրականացնել մեղմ վարկային քաղաքականություն: Այդ ճանապարհին կարևոր դերակատարություն կարող են ունենալ գյուղատնտեսական վարկային կոոպերատիվները, որոնց գործունեության կարգավորումը մեծ հաշվով դուրս է մնացել օրենսդրի ուշադրությունից, ուստի, կարծում ենք, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարկային կոոպերատիվների հասկացությունը՝ նրանց գործունեությունը կարգավորելով առանձին իրավական ակտով:

7. Զարգացած կապիտալիստական հասարակարգերում կոոպերատիվները ֆինանսական միջոցներով ապահովելու լավագույն միջոցներից

մեկը ներդրողների միջոցների ներգրավումն է: Բայց հաշվի առնելով կոոպերատիվ սկզբունքները՝ ներդրումների ներգրավումը կոոպերատիվներում չպետք է խաթարի դրանց անկախությունը և ինքնուրույնությունը: Չնայած «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքը սահմանում է ներդրող անդամի հասկացությունը, այնուհանդերձ նրա կարգավիճակի, իրավունքների և պարտականությունների, ներդրումների ներգրավման մեխանիզմների կարգավորումը ևս դուրս է մնացել օրենքի շրջանակներից: Մեր կողմի կատարվել են մի շարք առաջարկներ ներդրողների իրավական կարագավիճակը հստակեցնելու, ներդրումների համար առավել արդյունավետ իրավական կառուցակարգեր ստեղծելու ուղղությամբ:

8. Գյուղատնտեսական ապրանքների մատակարարման մոդելային պայմանագրի մշակումը՝ ըստ ՄԱԿ-ի ուղեցույցների, առաջնային և ամենապարզունակ գործիքն է, որը կոչված է իրականություն դարձնել պատասխանատու ներդրումների ինստիտուտը (responsible investment) գյուղատնտեսության ոլորտում: Նման պայմանագրերը կոչված են նպաստելու գյուղատնտեսության ոլորտում բիզնես միջավայրի զարգացմանը: Նման պայմանագրերը կնքվում են գյուղատնտեսական ապրանքների արտադրությամբ զբաղվող սուբյեկտների (արտադրող) և գյուղատնտեսական ապրանքերի վերամշակմամբ կամ վերավաճառքով զբաղվող սուբյեկտների միջև (գնորդ): Գյուղատնտեսական արտադրանքի մատակարարմանը վերաբերող տիպային պայմանագրերը առավելություն են տալիս թե՛ արտադրողներին, և թե՛ գնորդներին, մասնավորապես, պայմանագրի միջոցով արտադրողը հնարավորություն և երաշխիք է ունենում իր ապրանքների երկարաժամկետ մատակարարման համար, իսկ գնորդը հնարավորություն է ստանում տևական ժամանակ իրեն ապահովել գյուղատնտեսական արտադրանքով: Ժամանակակից պայմաններում, երբ գյուղատնտեսության ոլորտում ավելի ու ավելի է կարևորվում կոոպերատիվների՝ որպես գյուղատնտեսական ապրանք արտադրողների դերը, գյուղատնտեսական ապրանքների մատակարարման տիպային պայմանագրերի նախատեսումը կոչված է կոոպերատիվ շարժման համար լրացուցիչ խթան հանդիսանալու: Այդպիսի պայմանագրի օրինակ է կոնտրակտացման պայմանագիրը, որը դուրս մնաց 1998թ.-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կարգավորման շրջանակից: Հաշվի առնելով, որ կոնտրակտացման պայմանագիրը

կարող է մեծ դերակատարություն ունենալ գյուղատնտեսական ապրանքարտադրողների արտադրության իրացման գործում՝ կարծում ենք անհրաժեշտ է Քաղաքացիական օրենսգիրքը լրացնել համապատասխան հոդվածներով, որոնք ուղղված կլինեն կոնտրակտացման պայմանագրի կարգավորմանը:

9. Որպես ոլորտի զարգացման անհրաժեշտություն, կարծում ենք, անհրաժեշտ է գյուղատնտեսության նախարարության վերականգնումը, որը կմշակի և կիրագործի ոլորտի պետական քաղաքականությունը՝ կենտրոնացնելով գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերը և - նախանշելով աջակցության առաջնահերթ ուղղությունները:

10. Ամփոփելով աշխատանքում կատարված առաջարկները, որոնք մասամբ վերաբերում են նաև պետության կողմից ցուցաբերվող աջակցությանը, կարծում ենք, անհրաժեշտ է, որպեսզի գյուղական համայնքներից մեկում պետության կողմից իրականացվի կոոպերատիվների ստեղծման, նրանց նյութատեխնիկական բազայով ապահովման պիլոտային ծրագիր, որը կարճ ժամանակում կապացուցի մոդելի բիզնես արդյունավետությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Արթուր Վարդանյան «Կոոպերատիվը՝ որպես իրավաբանական անձի յուրահատուկ տեսակ»// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրատների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 2(2)2018, էջեր 122-137, Երևան 2019:

2. Արթուր Վարդանյան «Պետության կողմից ցուցաբերվող ֆինանսական աջակցությունը՝ որպես գյուղատնտեսական կոոպերատիվների աջակցության միջոց»// Պետություն և իրավունք թիվ 1(86), էջեր 52-59, Երևան 2020թ.:

3. Արթուր Վարդանյան «Կոոպերատիվների գործունեության սկզբունքները»// Արդարադատություն ամսագիր թիվ 2(51), էջեր 18-24, Երևան 2020թ.:

4. Արթուր Վարդանյան «Գյուղատնտեսական կոոպերատիվների տեսակները»// Պետություն և իրավունք թիվ 2 (87), էջեր 32-40, Երևան 2020թ.:

5. Արթուր Վարդանյան «Հողային բարեփոխումները՝ որպես գյուղատնտեսության զարգացման հիմնական խթան»// «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, էջեր 154-167, Երևան 2020թ.:

6. Արթուր Վարդանյան «Գյուղատնտեսական կոոպերատիվների կառավարման մարմինների ընդհանուր բնութագիրը»// «Օրինականություն» ուսումնամեթոդական հանդես թիվ 118, էջեր 51-57, Երևան-2020թ.:

7. Արթուր Վարդանյան «Կոոպերատիվի անդամի իրավական կարգավիճակը»// Պետություն և իրավունք թիվ 1 (89), էջեր 22-30, Երևան 2021թ.:

ARTUR VARDANYAN

AGRICULTURAL COOPERATIVE AS A SUBJECT OF BUSINESS RELATIONS

The increasing globalization of the world economy is forcing us to re-evaluate the seemingly traditional processes of economic life, to try to predict their role and significance in a rapidly changing world. One of those processes could be considered a cooperative movement which has already entered its three hundred years of existence. As a type of legal entities running economic activities cooperative not only proves traditional advantages, but also shows new qualities which makes cooperatives more demanding as a business model.

Economies of developed states are referred to as mixed type economies which assumes wide cooperation between state and entrepreneurs. Cooperatives are one of the important circles of that system which is obvious from the results fixed in different spheres of economy shown by the cooperatives. In spite of their long existence and fixed success cooperatives are now in a low level of development in Armenia. Reasons of such a low level are imperfection of legislation, lack of complex scientific researches, old and hardened notions about cooperatives.

Low standards of living in the Republic of Armenia, imperfect legal regulation of the sphere, not enough level of state support made necessary to refer to complex research of the problems and to mention present theoretical and practical problems trying also to possible solutions.

Time has shown that cooperative is not only preferable but also a mandatory type for saving viability of agricultural economies, cooperative is the only mean in modern economic models which gives chances to small agricultural entrepreneurs to compete with large business enterprises.

The scientific novelty of the research is lies in that for the first time the cooperative legislation has been comprehensively studied and has been

attempted to mark theoretical and practical problems of the sphere at the same time trying to give the possible solutions to the problems based on best international practice. Particularly the research is aimed to reveal the essence of cooperatives as business enterprises mentioning their advantages between other legal entities. Based on the analysis the author came to a number of theoretical conclusions and also made a number of recommendations concerning the improvement of legislation. The fundamental standpoints of the thesis have been reflected in the scientific articles published by the author.

ВАРДАНЯН АРТУР АРМЕНОВИЧ

СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ КООПЕРАТИВ КАК СУБЬЕКТ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКИХ ОТНОШЕНИЙ

Растущая глобализация мировой экономики заставляет нас переоценить по-видимому традиционные процессы экономической жизни, попытаться предсказать их роль и значение в быстро меняющемся мире. Один из этих процессов является кооперативное движение, которое уже вступило в трехсотлетний период своего существования. Как вид юридического лица занимающемся предпринимательской деятельностью кооператив не опровергал традиционные преимущества, но также демонстрирует новые качества, которые делают кооперативы более требовательными как бизнес-модель.

Экономики развитых стран относятся к экономике смешанного типа, предполагающей широкое сотрудничество государства и предпринимателей. Кооперативы являются одним из важных кругов этой системы, что очевидно из результатов, зафиксированных в различных сферах экономики, демонстрируемых кооперативами. Несмотря на долгое существование и неизменный успех, кооперативы в настоящее время в Армении находятся на низком уровне развития. Причины столь низкого уровня развитие - несовершенство законодательства, отсутствие комплексных научных исследований, старые и закаленные представления о кооперативах.

Низкий уровень жизни в Республике Армения, несовершенное правовое регулирование сферы, недостаточный уровень государственной поддержки вынудили обратиться к комплексному исследованию проблем и упомянуть существующие теоретические и практические проблемы, пытаясь найти возможные решения.

Время показало, что кооператив - это не только предпочтительный, но и обязательный вид сохранения жизнеспособности аграрной экономики, кооператив - это единственное средство в современных экономических моделях, которое дает возможность мелким сельскохозяйственным предпринимателям конкурировать с крупными бизнес предприятиями.

Научная новизна исследования заключается в том, что впервые кооперативное законодательство было всесторонне изучено и сделана попытка обозначить теоретические и практические проблемы сферы, одновременно пытаясь дать возможные решения проблем на основе лучшей международной практики. В частности, исследование направлено на раскрытие сущности кооперативов как коммерческих предприятий с указанием их преимуществ перед другими юридическими лицами. На основании анализа автор пришел к ряду теоретических выводов, а также дал ряд рекомендаций по совершенствованию законодательства. Основные положения диссертации отражены в научных статьях, опубликованных автором.